

րիշտ առատաձեռն¹⁹⁵: Անկեղծ էին եւ սէր եւ մեծարանք Լեւոնի առ Իննովկենտ, զորոյ քաջ ճանաչէր ոչ միայն զգերագանցութիւն աստիճանին, այլ եւ զանձնականն բարուցն եւ մտաց. վասն որոյ թէպէտ եւ մինչեւ յընդունել զթուղթն՝ անկեալ համարի ընդ բանադրանօք, այլ ոչ յամեաց թափել զկեղտն յանձնէ, ՚ի շնորհս երեսաց այնքանոյ վեհի, որում հանապազ որդի նորընծայ զինքն դաւանէր: Ասի գրեալ թուղթս զոջականս եւ առ պատրիարքն Երուսաղեմի. եւ սա զեկուցեալ առ Քահանայապետն՝ վկայութեամբ հաւատարմութեանն, հրաման ընկալաւ ՚ի նմին ամի (1213, պակասէ նշանակ ամսեանն)¹⁹⁶, արձակել զնա, ըստ խոստմանն իրաւախոհ լինելոյ ընդ պատրիարքին Անտիոքայ եւ ընդ Տաճարականաց. եւ արարին այնպէս պատրիարքն եւ Լեւոն: Բայց զխնդիր իրաւանց իշխանութեան Անտիոքայ ՚ի կախ եթող. միայն մերժեաց եւ սուտ եցոյց զբանս կոմսին, որ կոչեցեալ ՚ի պատրիարքէն յիրաւախոհութիւն ընդ Ռուբենի, ոչ միայն ասէր զինքն կայսեր Կ. Պօլսի լիճ լինել, վասն որոյ եւ ոչ յայլմէ ատենէ դատիլ. այլ թէ եւ կայսեր գրեալ էր առ Պապն՝ մի՛ եւս արկանել զնա ընդ եկեղեցական դատաստանաւ. ամենեւին անհիմն ասէր զայս բանս նորա՝ Քահանայապետն, եւ վասն առաջնոց եղերանցն՝ անարժան գոլ ունկնդրութեան:

Բայց եթէ զի՛նչ սահմանեաց վասն անվերջանալի եւ անլուծանելի խնդրոյն՝ ոչ է յայտ. զի թերակատար է թուղթն՝ յորմէ իմանամք զայսոսիկ, այսինքն կամ ոչ հրատարակեալ աւարտն, կամ պակասեալ ՚ի դիւանս: Միայն թուի Լեւոնի մեծոգութեամբ ՚ի հաճոյս Քահանայապետին՝ յետս կացեալ ՚ի վիճելոյ, թողեալ այլոց պահանջել զիրաւունս իւրեանց: Թուղթ մի Քահանայապետին առ կոմսն Տրիպօլսի տուեալ ՚ի 28 յանուարի¹⁹⁷ 1213 ամի՝ վասն վանաօր Ս. Պօղոսի վանաց Անտիոքայ, երեւեցուցանէ զնա ՚ի քաղաքին. եւ ՚ի հակառակէն՝ թուի յետ երկուց ամաց՝ այն է յամի 1215 յամսեան մարտի՝ յԱնտիոք լինել Լեւոնի, եւ վկայ պարգեւագրացն՝ զոր ետ Ռուբէն իբրեւ Բրինձ Անտիոքայ՝ ասպետաց¹⁹⁸ Հիւանդանոցին. յորում պարգեւագրի՝ թէ եւ չիք անուն քաղաքի, այլ վկայքն են պատրիարք եւ

¹⁹⁵ Casalia, etc. a karissimo filio nostro in Christo Leoni illustri Rege Armenie pia liberalitate collata, etc.— *Cartulaire*, p. 121.

¹⁹⁶ Թուղթ Իննովկ. ԺԶ. Է:

¹⁹⁷ Թուղթ Իննովկ. ԺԵ. ԺԹ:

¹⁹⁸ *Cartulaire*, 135.